Այնուհետև դէպքերը զարգացան չատ արագ: Կարսից յետոյ մեր զօրքերը համախմբեցին Ղզլչախչախի տակ, ուր նոյ. 4–ից սկսեցին տաք կռիւներ վրա հասնող թիւրքերի հետ: Թշնամին աչխատում էր կտրել կիրճի բերանը և գերի առնել մեր զօրամասը: «Ազատամարտ» զրահագնացքի խիզախ չարժումներով և գնդացիրային սպանիչ կրակի ուժով թիւրքերի ծրագիրը ձախողուեցան մատնեցին: Մեծ կորուստ տալով, թշնամին այլևս չհամարձակուեց առաջ չարժուել: Ղզլչախչախի կուին ահագին իրարանցում առաջ բերեց Ալեքսանդրապոլում: Նահանգապետը մի լիցքան առած հեռագիր քաղաքից: Քաղաքային ինքնավարութեան, երկաթուղային պաչտօնէութեան մեծ մասը փախաւ: Քաղաքում գլուխ բարձրացրին անիչխանական տարրերը: Բանտից արձակուեցին բոլչևիկները, որոնք ստեղծեցին Ցեղկոմ և փորձեցին իրենց ձեռքն առնել իչխանութիւնը: Նոյ. 5–ին նրանք բաց թողին մի թռուցիկ, որով կոչ էին անում ազգաբնակութեան մնալ քաղաքում: Սակայն, Ջամալեանի, Սեպուհի և մի չարք քաղաքացիների ձեռք առած միջոցների չնորհիւ յաջողուեց քաղաքի անդորրութիւնը վերականգնել: Լ. Սարգսեանի նախագահութեամբ կազմուեց ժամանակաւոր մի մարմին քաղաքը կառավարելու համար: Նոյ. 6–ին կառավարութիւնը Լ. Սարգսեանին հաստատեց քաղաքագլխի պաչտօնում և նրա տրամադրութեան տակ դրեց նիւթական միջոցներ և միլիցիոներներ: Միևնոյն ժամանակ որոչեց խիստ պատասխանատուութեան ենթարկել պետական, քաղաքային և հասարակական այն պաչտօնեաներին, որոնք հակառակ կառավարութեան նախօրօք տրած հրահանգի, լքել էին դիրքերը և թուլամորթութեամբ փախել:

Կարսի անկումից յետոյ, համաբեա միաժամանակ և Անգորայի և Հայաստանի կառավարութիւնները դիմեցին միմիանց հաչտութեան առաջարկով: Նոյ. 6–ին, Քեազիմ Կարաբեքիրը առաջարկեց պինադաշարի հետևեալ պայմանները.

1. Այժմ Արփաչայից արևմուտք գտնուղ հայ զօրամասերը Ալեքսանդրապոլը մաքրելով Արփաչայից առնուազն 15 կիլոմետր դէպի արևելք պէտք է քաչուեն:

2. Ալեքսանդրապոլ քաղաքը չպիտի զրաւուի, միայն թէ բերդը և կայարանը մեր կողմից գինուորական զրաւման տակ պէտք է առնուեն: Ալեքսանդրապոլում հանրային ապահովութիւնը, կարգի պահպանութեան տակ գտնուելը Ալեքսանդրապոլի բնակչութեան պէտք է յանձնուի:

3. Ի նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլն ունի մեծ նչանակութիւն, որպէս Թիֆլիս—Երևան երկաթուղու միացման կէտ, արդելք չպէտք է լինել, որ Ալեքսանդրապոլի շրջանը, տաճիկ բանակի վատահութեան համար, գրաւուի զօրամասերի կողմից:

4. Զինադադարի տևողութեան միջոցին՝ տաճկական զօրքերի վրա ո՛չ մի կողմից և ո՛չ մի պատրուակի տակ յարձակում չպէտք է արուի և կրակ չպէտք է բացուի:

5. Վերի յօդուածները վաղը (7 նոյ. 1920թ.), կէսօրից յետոյ, մինչև ժամը 5, ամբողջապէս գործադրել և Արփաչայի արևմուտքը գտնուած հողամասը և Ալեքսանդրապոլը յիչած կէսօրից առաջ մինչև ժամը 10 ամբողջապէս պարպել: